

184



ԱՄԵՆ. Տ. ՏԻՐԱՆ ՍՐԲ. ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

ԸՆՏՐԵԱԼ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՌԱՔ. ՍՈՒՐԲ ԱԹՈՒՌՅՆ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ



## Ս. Աթոռոյ Ընտրեալ Պատրիարքը

Մեծ երջանկութիւն եւ խոր գոհունակութիւն պատճառեց ազգային-եկեղեցական գրեթէ բոլոր երջանակներու մէջ, ընտրութիւնը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռոյ նոր պատրիարքին, յանձին Ս. Աթոռոյ Գեր. Տեղապահ Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեանի: Պատճառներս առաջին պրակը մամուլի յանձնուած էր արդէն երբ տեղի ունեցաւ երկար սպասուած այս մեծ դէպքը:— Յառաջիկային կը ձգենք հանգամանօրէն անդրադառնալ Ս. Աթոռոյ Նորընտիր Գահակալի անձին, նկարագրին եւ գործին մասին: Այս առթիւ կը կատարենք լոկ հետագայ ընդհանուր նշումները:

Ս. Աթոռոյս վերջին գահակալը, Երանաւորն Տ. Կիրեղ Պատրիարք, վախճանեցաւ 1949 Հոկտ. 28ին: Այնպէս որ Առաքելական Աթոռը աւելի քան եօթ տարիներ սուգի փոյով ծածկուած մնաց առանց բանաւոր եւ հար-



Ս. Գլխագրի առջեւ ընտրութենէն ետք:

կեցուցիչ պատճառի, մինչեւ իսկ յետին նպատակներով: Յամի Տեառն 1957 Մարտ 20ին, զարմանամուտի նախօրեակին, երբ Ս. Երկրին մէջ բնութիւնը արդէն իսկ զգեցած է ուրախութեան իր պատմունանը, կը վերցուի սուգի փոյը Ս. Աթոռոյ վրայէն: Երբ Մայր Տանարի մեծ ու պզտիկ զանգակները աւեսաւոր զանգիւններով տուին զուարթ լուրը ամենիին, տառապէս «ցնծացաւ Երուսաղէմ եւ բերկրեցան հաւաստեալք»: Առ Աստուած գոհութեան մաղբաններ հոսեցան արտերէ եւ գոհունակութեան մրնուորսը համակեց բոլոր հոգիները, փոքորիկէն վերջ պարզուած ծիածանի մը յուսալից գեղեցկութեամբը:

Ընտրելով, Գեր. Տ. Տիրան Արեւպիսկոպոս, ծանօթ դեմք մըն է արդէն մեր ժողովուրդի գրեթէ բոլոր խաւերուն, երուսազէմէն եւրոպա, Անգլիայէն Ամերիկա, իր հոգեւորական գործունէութեամբ: Ան Հայց. Եկեղեցւոյ ներկայ ժամանակներու ամենէն յայտնի, յարգուած եւ համակրանքի արժանացած հոգեւոր իշխանաւորներէն մէկն է: Կը կանչուի ան մեր Եկեղեցւոյ նուիրապետական կարեւորագոյն Արքուններէն մէկուն իբրեւ Գահակալ՝ իր կեանքի փորձառութեամբ հասուն եւ արդիւնաւորութեամբ լեցուն տարիքին: 53 տարեկան է Նորընտիր Պատրիարքը եւ իր ետին ունի շուրջ երեսուն տարիներու ֆահանայական, ուսուցչական եւ առաջնորդական բեղուն գործունէութիւն: Անցեալի արդիւնաւէտ իր պատշոնավարութիւնները ինքնին գրաւական եւ խոստում են նոր նուանումներու եւ նոր պատգամներու:

Նորընտիր Պատրիարքը օժտուած է հոգեւորականէ մը պահանջուած գրեթէ բոլոր ձիրքերով եւ ուժեղ անհասականութեամբ: Իր նկարագրին տիրական գիծերն են՝ հաստատուած հաւատք իր դաւանած հեմարտութեանց եւ կազմած համոզումներուն. անայլայլ յարատեւութիւն իր առաջադրած նպատակներու իրագործման մէջ եւ ամուր իրատեւութիւն որ չի տարուիր երեսուցներէ եւ խօսքերէ, ըլլան անոնք դրական կամ ժխտական, եւ վերաբերին՝ իր անձին կամ գործին մասին:

Իր կարողութիւնները բազմակողմանի են. ունի ուսուցանելու գրաւիչ եւ մտերու մէջ թափանցող մեթոտ. իր խօսքը, ըլլայ այդ քարոզ կամ բանախօսութիւն, ժողովներու մէջ հարցի մը ներկայացում կամ բացատրութիւն, յսակ, տրամաբանական եւ ուշագրաւ է: Կազմակերպողի կարողութիւններով օժտուած է հանրային կեանքի գրեթէ բոլոր երեսներու վրայ — դպրոցական, վանական, երիտասարդական, բնական եւ այլ մարզերուն մէջ:

Նորընտիր Պատրիարքի իրական սերը հանդէպ Սրբոց Յակոբեանց Մայր Հաստատութեան, անոր հաւատարմութիւնը եւ յարումը հանդէպ Սուրբ Էջմիածնի եւ Մայր Աթոռի Գահակալին, անոր նուիրումը հայ ժողովուրդի հոգեւոր եւ մտայնութեային յառաջդիմութեան եւ վերջապէս անոր գիտակից, աննախապաշար եւ առարկայական հայրենասիրութիւնը, հաստատուած համոզումներու վրայ հիմնուած անժխտելի առաքինութիւններ են իր մէջ: — Ի մի բան, Տիրան Արեւպիսկոպոս փնտրուած առաջնորդն է որ կուզայ գրաւել դարաւոր այս Հաստատութեան պատկառելի Աթոռը՝ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Տաղանապալի մէկ քաջանին: Վստահ ենք որ մեծ պիտի ըլլայ իր դերը Ս. Աթոռոյ վերելքին մէջ. վստահ ենք նաեւ որ կարեւոր պիտի ըլլայ իր բաժինը Հայց. Եկեղեցւոյ այժմու տաղանապալի մեղմացման եւ վերացման մէջ:

Այս առթիւ կ'աղօթենք եւ կը մաղթենք ի սրտէ որ Աստուած զնորհէ Ս. Աթոռոյս նոր Գահակալին առողջ եւ երկայն տարիներ, որպէս զի ան շարունակէ իր արդիւնաւորութեամբ իր ծառայութիւնն ու առաջնորդութիւնը հնադարեան այս պանծալի Հաստատութեան եւ Հայց. Եկեղեցիին: